

**Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում**

▯B

**Խորհրդի թիվ 2100/94 կանոնակարգի (ԵՀ) կիրառության համար՝  
Բուսատեսակների համայնքային գրասենյակին վճարման ենթակա տուրքերի  
առումով կիրարկող կանոններ սահմանող՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1995 թվականի  
մայիսի 31-ի թիվ 1238/95 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)**

*(ՊՏ L 121, 01.06.1995թ., էջ 31)*

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		Թիվ	էջ	ամսաթիվ
ՓM1	Հանձնաժողովի 2000 թվականի փետրվարի 11-ի թիվ 329/2000 կանոնակարգ (ԵՀ)	L 37	19	12.02 2000թ.
ՓM2	Հանձնաժողովի 2003 թվականի մարտի 28-ի թիվ 569/2003 կանոնակարգ (ԵՀ)	L 82	13	29.03.2003թ.
ՓM3	Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 20-ի թիվ 1177/2005 կանոնակարգ (ԵՀ)	L 189	26	21.07 2003թ.
M4	Հանձնաժողովի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 2039/2005 կանոնակարգ (ԵՀ)	L 328	33	15.12 2005թ.
M5	Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 19-ի թիվ 572/2008 կանոնակարգ (ԵՀ)	L 161	7	20.06.2008թ.
M6	Հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 15-ի	L 156	38	16.06 2012թ.

Ծանոթագրություն. Սույն համախմբված տարբերակը հղումներ է պարունակում Եվրոպական հաշվարկային միավորին եւ (կամ) ԵԱՄ-ին, որոնք 1999 թվականի հունվարի 1-ից պետք է հասկացվեն որպես հղումներ եվրոյին. Խորհրդի թիվ 3308/80 կանոնակարգ (ԵՏՀ) (ՊՏ L 345, 20.12.1980թ., էջ 1) եւ Խորհրդի թիվ 1103/97 (ԵՀ) կանոնակարգ (ՊՏ L 162, 19.06.1997թ., էջ 1):

▼B

**Խորհրդի թիվ 2100/94 կանոնակարգի (ԵՀ) կիրառության համար՝ Բուսատեսակների համայնքային գրասենյակին վճարման ենթակա տուրքերի առումով կիրարկող կանոններ սահմանող՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1995 թվականի մայիսի 31-ի թիվ 1238/95 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ՝

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

Հաշվի առնելով «Համայնքի բուսատեսակների նկատմամբ իրավունքների մասին» Խորհրդի 1994 թվականի հուլիսի 27-ի թիվ 2100/94 կանոնակարգը (ԵՀ) (հիմնական կանոնակարգը)<sup>1</sup>, եւ, մասնավորապես, դրա 113-րդ հոդվածը,

քանի որ թիվ 2100/94 կանոնակարգը (ԵՀ) պետք է կիրարկվի Բուսատեսակների համայնքային գրասենյակի (Գրասենյակի) կողմից, քանի որ Գրասենյակի եկամուտը պետք է սկզբունքորեն բավարար լինի՝ ապահովելու համար Գրասենյակի բյուջեի հավասարակշռությունը, քանի որ նման եկամուտները պետք է գոյանան Հիմնական կանոնակարգով եւ Խորհրդի թիվ 2100/94 կանոնակարգի (ԵՀ) կիրառության համար՝

<sup>1</sup> ՊՏ L 227, 01.09.1994թ., էջ 1:

Քուսատեսակների համայնքային գրասենյակում իրականացվող վարույթների առումով կիրարկող կանոններ սահմանող՝ Հանձնաժողովի 1995 թվականի մայիսի 31-ի թիվ 1239/95 կանոնակարգով (ԵՀ) սահմանված պաշտոնական ակտերի համար վճարվող տուրքերից<sup>2</sup>, (Վարույթների մասին կանոնակարգ), ինչպես նաև բուսատեսակների համայնքային իրավունքի գործողության ժամկետի համար վճարվող տարեկան տուրքերից,

քանի որ Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեից ստացվող սուբսիդիան կարող է ծածկել Գրասենյակի աշխատանքի նախնական ծախսերը՝ կանոնակարգի 113 (3) (բ) հոդվածով սահմանված անցումային շրջանի համար, քանի որ հնարավոր է երկարացնել այդ շրջանը մեկ տարով՝ ելնելով միեւնույն դրույթի նպատակներից,

քանի որ անհրաժեշտ է դիտարկել անցումային շրջանի նման երկարաձգումը, եթե ձեռք չի բերվել բավարար փորձ՝ տուրքերի ողջամիտ չափեր սահմանելու համար՝ կիրառելով ինքնաֆինանսավորման սկզբունքը եւ, միեւնույն ժամանակ, ապահովելով բուսատեսակների պաշտպանության համայնքային համակարգի գրավչությունը, քանի որ նման փորձ կարելի է ձեռք բերել միայն հետետողական լինելով Համայնքի բուսատեսակների նկատմամբ իրավունք ձեռք բերելու համար ներկայացված դիմումների թվին, դիմումներն ուսումնասիրող գրասենյակներին արված վճարումներին եւ Համայնքի բուսատեսակների նկատմամբ շնորհված իրավունքների գործողության ժամկետին,

քանի որ տուրքերի չափը պետք է հիմնված լինի Գրասենյակում գործող կայուն ֆինանսական կառավարման սկզբունքների, մասնավորապես՝ տնտեսման եւ ծախսարդյունավետության վրա,

քանի որ, ելնելով Գրասենյակի աշխատակազմի համար աշխատանքը պարզեցնելու նկատառումներից, անհրաժեշտ է ոչ միայն սահմանել, այլեւ ապահովել տուրքերի գանձումը եւ վճարումն այն արժույթով, որն օգտագործվում է Գրասենյակի բյուջեի համար,

քանի որ հայտերի ուսումնասիրության տուրքը պետք է լինի միասնական տուրք, որը ծածկում է միայն որեւէ կոնկրետ բուսատեսակի առումով ներկայացված՝ Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունք ձեռք բերելու հայտի ուսումնասիրությունը,

քանի որ Հիմնական կանոնակարգի 51-րդ հոդվածի համաձայն՝ դիմումների ուսումնասիրության տուրքը վճարելու ժամկետ պետք է համարվի վճարումը կատարելու համար անհրաժեշտ ակտերի եւ Գրասենյակի կողմից այդ վճարումը փաստացի ընդունելու

<sup>2</sup> Տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 37-րդ էջը:

միջեւ ընկած ժամանակահատվածը, մասնավորապես, մի կողմից Գրասենյակի կողմից արդեն կատարված ծախսերը շուտափույթ վերականգնելու համար եւ, մյուս կողմից, դյուրացնելու համար դիմումների արդյունավետ գրանցումը՝ հաշվի առնելով հայտատուի եւ Գրասենյակի միջեւ հնարավոր մեծ հեռավորությունները,

քանի որ հայտերի տեխնիկական ուսումնասիրության համար գանձված տուրքերի ընդհանուր գումարը պետք է սկզբունքորեն հավասարակշռի Գրասենյակի կողմից հայտերն ուսումնասիրող բոլոր գրասենյակներին վճարվող տուրքերի ընդհանուր գումարը, քանի որ պարտադիր չէ, որ տեղեկատվական ֆոնդի պահպանման ծախսերը ամբողջությամբ ծածկվեն հայտերի ուսումնասիրության համար գանձված տուրքերով, քանի որ հայտերի ուսումնասիրության տուրքի չափը չպետք է տարբերվի բուսատեսակների երեք խմբի համար՝ հաշվի առնելով բուսատեսակների պաշտպանության համար առկա ազգային կարգավորումների ներկայիս փորձը,

քանի որ Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքի գործողության ժամկետի համար գանձվող տարեկան տուրքերը պետք է եկամուտի լրացուցիչ աղբյուր լինեն Գրասենյակի համար, այնուամենայնիվ, դրանք պետք է, մասնավորապես, ծածկեն տեսակների տեխնիկական հաստատման հետ կապված ծախսերը՝ Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունք շնորհելուց հետո, եւ արդյունքում խմբավորվեն ըստ հայտերի ուսումնասիրության տուրքերի համար սահմանված կարգի,

քանի որ բողոքարկման համար վճարվող տուրքը պետք է լինի միասնական՝ ծածկելու համար բողոքարկման վարույթի հետ կապված հիմնական ծախսերը՝ բացառությամբ տեխնիկական ուսումնասիրության հետ կապված ծախսերի՝ համաձայն Հիմնական կանոնակարգի 55-րդ եւ 56-րդ հոդվածների, կամ վկայություն վերցնելու հետ կապված ծախսերի, քանի որ հայտ ներկայացնելու համար գանձվող տուրքի վճարման համար նախատեսված են երկու տարբեր ամսաթվեր՝ խրախուսելու համար բողոքարկողներին վերանայելու իրենց բողոքը՝ հաշվի առնելով Գրասենյակի՝ Հիմնական կանոնակարգի 70(2) հոդվածի համաձայն ընդունած որոշումները,

քանի որ հատուկ դիմումների հետ կապված տուրքերը սկզբունքորեն ծածկում են Գրասենյակի կողմից դրանց ընթացք տալու ժամանակ կատարվող ծախսերը, այդ թվում՝ այն ծախսերը, որոնք կապված են նման դիմումների վերաբերյալ որոշումներ ընդունելու հետ,

քանի որ ծախսերի կառավարման ճկունությունն ապահովելու համար Գրասենյակի նախագահը պետք է իրավասու լինի սահմանելու այն տուրքերը, որոնք վճարվում են հայտերի ուսումնասիրության վերաբերյալ՝ հայտ ներկայացնելու օրն արդեն առկա եւ Գրասենյակին ոչ հասանելի հաշվետվությունների համար, ինչպես նաեւ մատուցված հատուկ ծառայությունների համար,

քանի որ կարող են գանձվել հավելավճարներ՝ նվազեցնելու համար Գրասենյակի կողմից կատարվող ոչ նպատակային այն ծախսերը, որոնք առաջանում են Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքի հայտ ներկայացրած կամ այդ իրավունքը կրող կոնկրետ անձանց կողմից ոչ բավարար համագործակցության հետեւանքով,

քանի որ սույն Կանոնակարգը պետք է ուժի մեջ մտնի հնարավորինս շուտ՝ հաշվի առնելով Հիմնական կանոնակարգի 117-րդ հոդվածը,

քանի որ Գրասենյակի վարչական խորհուրդը խորհրդատվություն է տրամադրել,

քանի որ սույն Կանոնակարգով նախատեսված դրույթները համապատասխանում են Բուսատեսակների նկատմամբ իրավունքների հարցերով մշտական հանձնաժողովի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

## Հոդված 1

### Գործողության շրջանակը

1. Գրասենյակին վճարման ենթակա տուրքերը, ինչպես նախատեսված է Հիմնական կանոնակարգով եւ Վարույթների մասին կանոնակարգով, գանձվում են սույն Կանոնակարգին համապատասխան:
2. Գրասենյակին վճարման ենթակա տուրքերը սահմանվում են, գանձվում եւ վճարվում եվրոյով:
3. 1-ին եւ 2-րդ պարբերությունները, համապատասխան փոփոխություններով, կիրառվում են Գրասենյակին վճարման ենթակա բոլոր հավելավճարների նկատմամբ:
4. Այն տուրքերի տարրերը, որոնք Հիմնական կանոնակարգի կամ սույն Կանոնակարգի դրույթների նպատակներով կարող են գանձվել անդամ պետությունների իշխանությունների

կողմից, կարգավորվում են տվյալ անդամ պետությունների համապատասխան ազգային օրենքներով:

5. Եթե Գրասենյակի նախագահն իրավասու է որոշում կայացնելու տուրքերի չափի եւ վճարման կարգի վերաբերյալ, ապա նման որոշումները հրապարակվում են Գրասենյակի Պաշտոնական տեղեկագրում:

## **Հոդված 2**

### **Ընդհանուր դրույթներ**

1. Յուրաքանչյուր առանձին դեպքի համար վարույթի որեւէ կողմ, «Վարույթների մասին» կանոնակարգով սահմանված կարգով, տուրքերը կամ հավելավճարները վճարելու պարտավորություն է կրում: Եթե վարույթի մի քանի կողմ գործում են միասին կամ իրականացնում են միասնական գործողությունների պլան, ապա նրանցից յուրաքանչյուրը կրում է նման վճարում կատարելու պարտավորություն՝ որպես համատեղ պարտապան:

2. Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգով, ապա կիրառվում են Գրասենյակում իրականացվող վարույթների, այդ թվում՝ լեզուների հետ կապված դրույթները՝ սահմանված Հիմնական կանոնակարգով եւ «Վարույթների մասին» կանոնակարգով:

## **Հոդված 3**

### **Վճարման կարգը**

1. Գրասենյակին վճարման ենթակա տուրքերը եւ հավելավճարները մուծվում են Գրասենյակի բանկային հաշվին փոխանցումով:

2. Գրասենյակի նախագահը կարող է թույլատրել վճարման հետեւյալ այլընտրանքային ձեւերը՝ աշխատանքային մեթոդների մասին կանոններին համապատասխան, որոնք սահմանվում են՝ համաձայն Հիմնական կանոնակարգի 36 (1) (դ) հոդվածի.

▼M5

ա) գրասենյակին եվրոյով վճարման ենթակա երաշխավորված չեկերի առաքում կամ փոխանցում,

բ) փոխանցում եվրոյով՝ Գրասենյակի ժիրո հաշվին,

գ) վճարում Գրասենյակի՝ եվրո արժույթով բաց վարկային գծով հաշվին, կամ

դ) վճարում վճարային քարտի միջոցով:

▼B

#### Հոդված 4

Վճարումն ընդունելու օր համարվող ամսաթիվը

1. Գրասենյակի կողմից տուրքերը եւ հավելավճարներն ընդունելու օր է համարվում այն օրը, երբ 3 (1) հոդվածում նշված փոխանցվող գումարը փաստացի մուտքագրվում է Գրասենյակի բանկային հաշվին:

2. Եթե Գրասենյակի նախագահը թույլատրում է վճարման այլ ձևեր՝ 3 (2) հոդվածին համապատասխան, ապա նա միեւնույն ժամանակ պայմաններում սահմանվում է այն օրը, երբ ընդունվելու է վճարումը:

▼M2

3. Եթե Գրասենյակի կողմից վճարումն ընդունված չի համարվում համապատասխան ժամկետում, ապա Գրասենյակի նկատմամբ նման ժամկետը համարվում է պահպանված, եթե այդ ժամկետում բավարար փաստաթղթային ապացույց է ներկայացվել, ըստ որի՝ վճարում կատարող անձը տվյալ ժամանակահատվածում վճարման գումարը Գրասենյակի բանկային հաշվին եվրոյով փոխանցելու պատշաճ հանձնարարագիր է ներկայացրել բանկային հաստատությանը կամ փոստային գրասենյակին:

▼M2 \_\_\_\_\_

▼M2

5. 3-րդ կետի իմաստով՝ փաստաթղթային ապացույցը համարվում է բավարար, եթե ներկայացվում է վճարման հանձնարարագրի ստացական՝ տրամադրված բանկային հաստատության կամ փոստային գրասենյակի կողմից: Այնուամենայնիվ, եթե հանձնարարագրված փոխանցումը կատարվել է բանկային էլեկտրոնային փոխանցման SWIFT մեթոդով, ապա վճարման հանձնարարագրի ստացականը տրամադրվում է SWIFT հաշվետվության պատճենի միջոցով՝ կնքված եւ ստորագրված բանկի կամ փոստային գրասենյակի համապատասխան լիազոր անձի կողմից:

▼B

## Հոդված 5

Վճարումը կատարող անձի անունը եւ վճարման նպատակը

1. Տուրքեր կամ հավելավճարներ մուծող անձը գրավոր նշում է իր անունը եւ այդ վճարման նպատակը:

2. Եթե Գրասենյակը չի կարողանում հաստատել վճարման նպատակը, ապա այն պահանջում է, որ վճարում կատարած անձը երկու ամսվա ընթացքում գրավոր տեղեկացնի այդ նպատակի մասին: Եթե այդ ժամանակահատվածում չի նշվում նպատակը, ապա վճարումը համարվում է չկատարված եւ վերադարձվում է այն կատարած անձին:

## Հոդված 6

Թերի վճարված գումարները

Տուրքերը կամ հավելավճարները մուծելու ժամկետը սկզբունքորեն համարվում է պահպանված միայն այն դեպքում, եթե տուրքի կամ հավելավճարի ամբողջ գումարը մուծվել է ժամանակին: Եթե տուրքը կամ հավելավճարն ամբողջովին չի մուծվում, ապա մուծված գումարը վերադարձվում է վճարման ժամկետի ավարտից հետո: Այնուամենայնիվ, հիմնավորված դեպքերում, Գրասենյակը կարող է հաշվի չառնել որոշ փոքր թերություններ՝ չհակասելով վճարում կատարող անձանց իրավունքներին:

## Հոդված 7

Հայտ ներկայացնելու համար վճարվող տուրքը

▼M6

1. Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունք ձեռք բերելու հայտ ներկայացնող անձը (հայտատուն) վճարում է տուրք 650 եվրոյի չափով՝ հայտին ընթացք տալու համար, ինչպես նշված է Հիմնական կանոնակարգի 113(2)(ա) հոդվածում:

▼B



2. Հայտատուն ձեռնարկում է անհրաժեշտ քայլերը՝ 3-րդ հոդվածին համապատասխան մուծելու համար հայտ ներկայացնելու տուրքը նախքան հայտն անմիջապես Գրասենյակ կամ որեւէ ենթագրասենյակ կամ ազգային գրասենյակ ուղարկելը կամ ուղարկելու օրը՝ Հիմնական կանոնակարգի 30(4) հոդվածի համաձայն. 4(4) հոդվածը կիրառվում է համապատասխան փոփոխություններով:

3. Եթե համարվում է, որ հայտ ներկայացնելու տուրքը չի ընդունվել Գրասենյակի կողմից հայտն ընդունելու հետ միաժամանակ, ապա Գրասենյակը, Հիմնական կանոնակարգի 51-րդ հոդվածին համապատասխան, սահմանում է երկշաբաթյա ժամկետ, որի ընթացքում հայտ ներկայացնելու՝ վերոնշյալ 51-րդ հոդվածին համապատասխան նշանակված պաշտոնական օրը չի փոխվում. նախքան այդ ժամանակահատվածի ավարտը հայտատուին չի ներկայացվում վճարման նոր պահանջագիր՝ նախատեսված Հիմնական կանոնակարգի 83(2) հոդվածով:

4. Եթե համարվում է, որ հայտ ներկայացնելու տուրքը չի ընդունվել 3-րդ պարբերության համաձայն սահմանված ժամկետի ընթացքում, ապա հայտ ներկայացնելու օր է համարվում վճարումն ընդունելու օրը՝ Հիմնական կանոնակարգի 51-րդ հոդվածի իմաստով:

▼M2

5. 4-րդ պարբերությունը չի կիրառվում, եթե հայտին կցված են բավարար փաստաթղթային ապացույցներ, ըստ որոնց՝ վճարում կատարող անձը տվյալ ժամանակահատվածում վճարման գումարը Գրասենյակի բանկային հաշվին եվրոյով փոխանցելու պատշաճ հանձնարարագիր է ներկայացրել բանկային հաստատությանը կամ փոստային գրասենյակին. 4(5) հոդվածը կիրառվում է համապատասխան փոփոխություններով:

▼B

6. Այնքան ժամանակ, որքան հայտ ներկայացնելու տուրքը չի համարվում Գրասենյակի կողմից ընդունված, վերջինս չի հրապարակում տվյալ հայտը եւ հետաձգում է տեխնիկական ուսումնասիրությունը:

▼M2

7. Եթե հայտ ներկայացնելու տուրքի վճարումն ընդունվել է, սակայն հայտն անվավեր է՝ Հիմնական կանոնակարգի 50-րդ հոդվածի համաձայն, ապա Գրասենյակը հայտ ներկայացնելու տուրքից պահում է 300 եվրոյի չափով գումար եւ հայտում հայտնաբերված թերությունների մասին հայտատուին ծանուցելիս, վերադարձնում է մնացած մասը:

## Հոդված 8

### Տեխնիկական ուսումնասիրության հետ կապված տուրքերը

1. Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունք ձեռք բերելու հայտի առարկա հանդիսացող բուսատեսակի տեխնիկական ուսումնասիրությունը կազմակերպելու եւ իրականացնելու համար վճարվող տուրքերը, այն է՝ ուսումնասիրության տուրքերը, վճարվում են I հավելվածին համապատասխան՝ աճեցնելու յուրաքանչյուր նոր փուլի համար: Այն բուսատեսակների դեպքում, որոնց համար պետք է շարունակաբար հատուկ բաղադրիչներով նյութ օգտագործվի՝ նմուշն ստանալու համար, 1-ին հավելվածով սահմանված ուսումնասիրության տուրքը գանձվում է այդ բուսատեսակի, ինչպես նաեւ բաղադրիչներից յուրաքանչյուրի համար, որոնց նկարագիրը բացակայում է, եւ որոնք նույնպես պետք է ուսումնասիրվեն. այնուամենայնիվ, ոչ մի պարագայում այն չպետք է գերազանցի 3000 ՝ եվրոն:
2. Աճեցման առաջին փուլի համար նախատեսված ուսումնասիրության տուրքը վճարվում է ոչ ուշ, քան ըՄՄ1 ————— ՝ տեխնիկական ուսումնասիրության համար նմուշն ընդունելու վերջին օրը:
3. Աճեցման յուրաքանչյուր հաջորդական փուլի համար նախատեսված ուսումնասիրության տուրքը վճարվում է ոչ ուշ, քան այդ փուլի մեկնարկից մեկ ամիս առաջ, եթե Գրասենյակն այլ բան չի որոշել:
4. Գրասենյակի նախագահը հրապարակում է ուսումնասիրության տուրքերի վճարման օրերը Գրասենյակի Պաշտոնական տեղեկագրում:
5. Արդեն իրականացված տեխնիկական ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հաշվետվություն կազմելու դեպքում, Վարույթների մասին կանոնակարգի ըՄՄ1 27-րդ հոդվածին համապատասխան ՝ , նախքան Հիմնական կանոնակարգի 51-րդ հոդվածի համաձայն հայտ ներկայացնելու օրը, գանձվում է վարչական տուրք՝ Գրասենյակի կողմից սահմանված ժամկետում:

## Հոդված 9

### Տարեկան տուրքերը

#### ▼M5

1. Գրասենյակը Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքի գործողության ժամկետի յուրաքանչյուր տարվա համար Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքի իրավատիրոջից (այսուհետ՝ «իրավատեր») գանձում է տուրք (այսուհետ՝ «տարեկան տուրք») 300 եվրոյի չափով՝ 2009 թվականի եւ հաջորդող տարիների համար:

#### ▼M2

2. Տարեկան տուրքը գանձվում է՝

- ա) Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքի գործողության ժամկետի առաջին տարվա համար՝ իրավունքը շնորհելուց հետո 60 օրվա ընթացքում, եւ
- բ) Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքի գործողության ժամկետի հաջորդ տարիների համար՝ այն ամսվան նախորդող օրացուցային ամսվա առաջին օրը, երբ լրացել է իրավունքը շնորհելու մեկ տարին:

#### ▼B

3. Գրասենյակը պահանջագիր է ներկայացնում իրավատիրոջը, որտեղ նշված է վճարման առարկան, վճարման ենթակա գումարը, վճարման ամսաթիվը, ինչպես նաեւ տեղեկատվություն լրացուցիչ տուրքի հնարավոր գանձման մասին՝ համաձայն 13 (2) (ա) հոդվածի:

4. Գրասենյակը չի փոխհատուցում այն վճարումները, որոնք կատարվել են՝ Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքն ուժի մեջ պահելու համար:

## Հոդված 10

### Հատուկ դիմումներին ընթացք տալու համար վճարվող տուրքերը

1. Դիմումին ընթացք տալու համար նման դիմում ներկայացրած անձի կողմից վճարման ենթակա տուրքերը հետեւյալն են.

ա) պարտադիր շահագործման իրավունք ձեռք բերելու նպատակով ներկայացված հայտի, այդ թվում՝ գրանցամատյաններում կատարվող բոլոր գրանցումների համար, Գրասենյակի կողմից՝ Հիմնական կանոնակարգի 100 (2) հոդվածի համաձայն տրամադրվող շահագործման իրավունք ձեռք բերելու նպատակով ներկայացված հայտի կամ արդեն տրամադրված շահագործման իրավունքները փոփոխելու մասին դիմումի համար (պարտադիր արտոնագրային վճար), բացառությամբ այն դեպքերի, երբ հայտը ներկայացվում է Հանձնաժողովի կամ անդամ պետության կողմից՝ Հիմնական կանոնակարգի 29-րդ հոդվածում նշված հանգամանքներում՝ Մ5 1500 Է եվրո;

բ) Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքների գրանցամատյանում հետեւյալ գրանցումները կատարելու նպատակով ներկայացված դիմումի համար (գրանցման տուրք)՝

- Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքի փոխանցում, շահագործման պայմանագրային իրավունք,
- բուսատեսակների հաստատումը որպես առաջնային կամ որպես հիմնական ածանցյալ,
- դատական վարույթների հարուցում՝ Հիմնական կանոնակարգի 98 (1), (2) եւ 99 հոդվածներում նշված հայցերով,
- Համայնքում բուսատեսակների նկատմամբ որպես պարտավորությունների ապահովման միջոց կամ որպես գույքային իրավունքի օբյեկտ տրամադրված իրավունք, կամ
- Հիմնական կանոնակարգի 24-րդ հոդվածում նշված ցանկացած բռնագանձում՝ Մ2 100 եվրո Է ;

գ) Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքներ ձեռք բերելու նպատակով ներկայացված հայտերի գրանցամատյանում կամ Համայնքում բուսատեսակների նկատմամբ իրավունքների գրանցամատյանում որեւէ գրանցում կատարելու մասին ներկայացված դիմումների համար՝ Մ5 100 Է եվրո,

ծախսերի չափը որոշելու նպատակով ներկայացված դիմումի համար՝ կանոնակարգի 85 (5) հոդվածի համաձայն՝ Մ5 100 Է եվրո:

2. 1-ին պարբերության մեջ նշված տուրքերը ենթակա են վճարման դրանց հետ կապված դիմումն ընդունելու օրը: Եթե վճարումը չի ընդունվել ժամանակին, ապա կիրառվում է հիմնական կանոնակարգի 83 (2) հոդվածը:

▼M2

3. Եթե 1–ին պարբերության (բ) եւ (գ) կետերում նշված որեւէ գրանցման մասին դիմումը վերաբերում է մեկից ավելի հայտի կամ գրանցված իրավունքի, որոնք ձեռք բերելու համար հայտ է ներկայացրել միեւնոյն անձը կամ որոնք պատկանում են միեւնոյն իրավատիրոջը, ապա գանձվում է միայն մեկ տուրք:

▼B

## **Հոդված 11**

Բողոքարկման համար վճարվող տուրքը

1. Բողոքարկողը վճարում է բողոքարկման տուրք օՄ5 1500 օ եվրոյի չափով, որպեսզի բողոքարկմանն ընթացք տրվի՝ Հիմնական կանոնակարգի 113 (2) (գ) հոդվածով նախատեսված կարգով:

2. Բողոքարկման տուրքի մեկ երրորդ մասը ենթակա է վճարման Գրասենյակում բողոքարկման օրը. այդ մեկ երրորդ մասի նկատմամբ կիրառվում է Հիմնական կանոնակարգի 83 (2) հոդվածը: Բողոքարկման տուրքի մնացած՝ երկու երրորդ մասը Գրասենյակի պահանջով ենթակա է վճարման՝ Բողոքարկման խորհրդում Գրասենյակի համապատասխան մարմնի կողմից գործը դադարեցնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

3. Նախնական վերանայման դեպքում վճարված բողոքարկման տուրքի փոխհատուցման հանձնարարական է տրվում Գրասենյակի նախագահի իրավասության ներքո, իսկ մյուս դեպքերում՝ Բողոքարկման խորհրդի կողմից՝ պայմանով, որ բավարարվեն Հիմնական կանոնակարգի 83 (4) հոդվածով սահմանված պահանջները:

4. 1–ին պարբերությունը չի կիրառվում Հանձնաժողովի կամ այն անդամ պետությունների նկատմամբ, որոնք բողոքարկում են Հիմնական կանոնակարգի 29(2) հոդվածի համաձայն ընդունված որոշումները:

## **Հոդված 12**

Գրասենյակի նախագահի կողմից սահմանված տուրքերը

1. Գրասենյակի նախագահը տուրքեր է սահմանում հետեւյալ դեպքերի համար.

ա) 8 (5) հոդվածում նշված վարչական տուրքը,

▼M3

բ) փաստաթղթերի հավաստագրված պատճենները տրամադրելու տուրքերը,

▼B

գ) Գրասենյակի պաշտոնական տեղեկագրի հետ կապված ծախսերը (Հիմնական կանոնակարգի 89-րդ հոդված, Վարույթների մասին կանոնակարգի 87-րդ հոդված) Գրասենյակի կողմից կատարվող Մ1 ցանկացած այլ հրապարակումների տուրքերը, եւ

▼M1

դ) վարույթների մասին կանոնակարգի 82(2) հոդվածում նշված վարչական տուրքը:

▼B

2. Գրասենյակի նախագահը կարող է որոշում կայացնել, որ 1(բ), (գ) եւ (դ) պարբերություններում Մ1 նշված ծառայությունները մատուցվում են կանխավճարով:

### Հոդված 13

#### Հավելավճարները

1. Գրասենյակը կարող է հայտ ներկայացնելու տուրքի հետ միասին գանձել հավելավճար, եթե այն սահմանում է, որ.

ա) առաջարկված անվանումը չի կարող հաստատվել՝ Հիմնական կանոնակարգի 63-րդ հոդվածին համապատասխան, քանի որ այն նույնական է մեկ այլ բուսատեսակի անվանման հետ կամ այն պատճառով, որ այն տարբերվում է միեւնույն տեսակի անվանումից, կամ

բ) Համայնքում բուսատեսակի նկատմամբ իրավունք ձեռք բերելու համար հայտ ներկայացրած անձը բուսատեսակի անվանման նոր առաջարկ է ներկայացնում՝ նախքան Գրասենյակի կողմից նման պահանջ ներկայացնելը կամ նախքան տվյալ հայտատուի կողմից Համայնքում բուսատեսակի նկատմամբ իրավունք ձեռք բերելու նպատակով հայտ ներկայացնելը՝ Վարույթների մասին կանոնակարգի 21 (3) հոդվածին համապատասխան:

Գրասենյակը չի հրապարակում տեսակի անվանման մասին ներկայացված առաջարկը՝ նախքան առաջին ենթապարբերության դրույթներին համապատասխան գանձվող հավելավճարի մուծումը:

2. Գրասենյակը կարող է տարեկան տուրքի հետ միասին գանձել հավելավճար, եթե այն սահմանում է, որ.

ա) իրավատերը չի վճարել տարեկան տուրքը 9 (2) եւ (3) հոդվածին համապատասխան, կամ

բ) երրորդ կողմի՝ արդեն գոյություն ունեցող իրավունքի հետ հակասություն դեպքում բուսատեսակի անվանումը պետք է փոփոխվի՝ Հիմնական կանոնակարգի 66 (1) հոդվածով սահմանված կարգով:

3. 1-ին եւ 2-րդ պարբերություններում նշված հավելավճարները գանձվում են՝ Հիմնական կանոնակարգի 36 (1) (դ) հոդվածի համաձայն սահմանվող՝ աշխատանքային մեթոդների մասին կանոններին համապատասխան, կազմում են տվյալ տուրքի 20 %-ը՝ նվազագույնը օՄՏ 100 օ եվրոյի չափով, եւ ենթակա են վճարման Գրասենյակի կողմից պահանջագիր ներկայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

## **Հոդված 14**

### **Շեղումները**

1. Չնայած 7-րդ հոդվածին, հայտ ներկայացնելու համար Հիմնական կանոնակարգի 51-րդ հոդվածի համաձայն սահմանված պաշտոնական օրը վավեր է մնում դրա 116 (1) կամ (2) հոդվածին համապատասխան ներկայացված բոլոր հայտերի առումով, եթե մինչեւ 1995 թվականի սեպտեմբերի 30-ը բավարար ապացույցներ են ներկայացվել, որ Համայնքում բուսատեսակի նկատմամբ իրավունքի հայտատուն իրականացրել է հայտ ներկայացնելու տուրքի վճարման համար անհրաժեշտ գործողությունները:

2. Չնայած 8 (5) հոդվածին՝ վճարվում է վարչական տուրք օՄՏ 100 օ եվրոյի չափով, եթե իրականացվում է բուսատեսակի տեխնիկական ուսումնասիրություն՝ բուսատեսակի նկատմամբ ազգային իրավունք շնորհելու գծով իրականացված վարույթների արդյունքների հիման վրա՝ Հիմնական կանոնակարգի 116 (3) հոդվածին համապատասխան: Այս վարչական տուրքը ենթակա է վճարման մինչեւ 1995 թվականի նոյեմբերի 30-ը:

3. Չնայած 8 (5) հոդվածին՝ այն իրավասու մարմինները, որոնք բուսատեսակի նկատմամբ ազգային իրավունք շնորհելու գծով վարույթներն են իրականացրել, կարող են Համայնքում բուսատեսակի նկատմամբ իրավունքի հայտատուից գանձել տուրք՝ տրամադրելու համար համապատասխան փաստաթղթերը՝ համաձայն Վարույթների մասին կանոնակարգի 93 (3)

հողվածով սահմանված պայմանների: Նման տուրքը չի գերազանցում տվյալ անդամ պետությունում ուսումնասիրության վերաբերյալ հաշվետվությունը մեկ այլ երկրի փորձաստուգում իրականացնող մարմնին փոխանցելու համար գանձվող տուրքը. դրա վճարումը չի հակասում 1-ին եւ 2-րդ պարբերությունների համաձայն իրականացվող վճարումներին:

4. Չնայած 8-րդ հոդվածին՝ հաշվետվության համար տուրք է վճարվում 0M5 300 Էվրոյի չափով, եթե առկա է Վարոյթների մասին կանոնակարգի 94-րդ հոդվածում նշված՝ ուսումնասիրության վերաբերյալ հաշվետվությունը: Վճարումը կատարվում է Գրասենյակի կողմից սահմանված ժամկետում:

### **Հոդված 15**

#### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

▼M5



ՀԱՎԵԼՎԱԾ I

Ց-րդ հողվածում նշված՝ տեխնիկական ուսումնասիրության հետ կապված տուրքերը

Բուսատեսակի տեխնիկական ուսումնասիրության համար ց-րդ հողվածի համաձայն վճարվող տուրքը սահմանվում է աղյուսակին համապատասխան.

(Եվրոյով)		
Ծախսի տեսակներն ըստ խմբերի		Տուրք
Գյուղատնտեսական խումբ		
1	Կանոնավոր բերք	1 200
2	Վեգետատիվ ճանապարհով բազմացող մշակաբույսեր	1 700
3	Յուղատու մշակաբույսեր	1 340
4	Խոտեր	1 970
5	Ճակընդեղ	1 300
6	Թելատու մշակաբույսեր	1 160
7	Փորձաստուգման համար հատուկ պայմաններ պահանջող մշակաբույսեր	1 340
8	Այլ գյուղատնտեսական մշակաբույսեր	1 340
Դեկորատիվ խումբ		
9	Կենդանի հավաքածուի տեսակներ, ջերմոցային փորձաստուգում եւ երկարաժամկետ մշակում պահանջող բուսատեսակներ	1 700
9A	Կենդանի հավաքածուի տեսակներ, ջերմոցային փորձաստուգում, երկարաժամկետ մշակում եւ հատուկ բուսասանիտարական պայմաններ պահանջող	2 140

	բուսատեսակներ	
10	կենդանի հավաքածուի տեսակներ, ջերմոցային փորձաստուգում եւ կարճաժամկետ մշակում պահանջող բուսատեսակներ	1 610
11	կենդանի հավաքածուի տեսակներ, բացօթյա փորձաստուգում եւ երկարաժամկետ մշակում պահանջող բուսատեսակներ	1 430
12	կենդանի հավաքածուի տեսակներ, բացօթյա փորձաստուգում եւ կարճաժամկետ մշակում պահանջող բուսատեսակներ	1 300
13	կենդանի հավաքածուի տեսակներ, ջերմոցային փորձաստուգում եւ երկարաժամկետ մշակում չպահանջող բուսատեսակներ	1 430
13A	կենդանի հավաքածուի տեսակներ, ջերմոցային փորձաստուգում եւ երկարաժամկետ մշակում չպահանջող բուսատեսակներ՝ հետագա բազմացման նպատակով	2 140
14	կենդանի հավաքածուի տեսակներ, ջերմոցային փորձաստուգում եւ կարճաժամկետ մշակում չպահանջող բուսատեսակներ	1 160
15	կենդանի հավաքածուի տեսակներ, բացօթյա փորձաստուգում եւ երկարաժամկետ մշակում չպահանջող բուսատեսակներ	1 250
16	կենդանի հավաքածուի տեսակներ, բացօթյա փորձաստուգում եւ կարճաժամկետ մշակում չպահանջող բուսատեսակներ	1 340
17A	Դեկորատիվ բույսեր, սերմերով բազմացող բույսեր,	1 450

	բացօթյա փորձաստուգում	
18A	Դեկորատիվ բույսեր, սերմերով բազմացող բույսեր, ջերմոցային փորձաստուգում	2 000
17, 18 եւ 19	Հանվել է	
Բանջարեղենների խումբ		
20	Սերմերով բազմացող բուսատեսակներ, բացօթյա փորձաստուգում	1 430
21	Սերմերով բազմացող բուսատեսակներ, ջերմոցային փորձաստուգում	1 790
22	Վեգետատիվ ճանապարհով բազմացող բուսատեսակներ, բացօթյա փորձաստուգում	1 970
23	Վեգետատիվ ճանապարհով բազմացող բուսատեսակներ, ջերմոցային փորձաստուգում	1 610
Մրգերի խումբ		
24	Ծառեր	1 790
24A	ընդարձակ հարատև կենդանի հավաքածուի տեսակներ պահանջող ծառատեսակներ	2 500
25	Թփեր	1 790
26	Խաղողի կուլտուրաներ	1 790
27	Փաթաթվող բույսեր	1 970